

դիտել, քայլ չենք դիտեր ինչ գիտաց հետեւում.
Թեամբ, թերեւս ստիպուած էր նոյն իշխանը քա-
ղաքը վերաշինել որեւէ կործանման մ'եղաք.
Կամ Թերեւս գաղթականութիւն մը խաբած է
հոն՝ ինչպէս յԱրքեպիսկոպոս Կապպադոքիոյ: Իւր
հաղարածէն առնուած լեզունականաց Թուոյն
նայելով՝ կրնայ կարծուիլ թէ քաղաքը հասակա-
կան քաղաքի իրաւունքը կը վայելէր: Նոյն իսկ
յորմէ հետէ Պոնտոս Տրպիսանու ասան կցուեցաւ
Կապպադոքիոյ կուսակալութեան, Փաղերմեթիոս
շարունակեց՝ մինչեւ Դիոկղէտիանոսի շրջանը մնալ
իրեն մաս Պափղագոնիոյ, որ կախուած էր Գա-
լատիայէն:

Նեոկադադիոպոլսոյ ունեցած գիրքը՝ Փաբուն
Ասիոյ հիւսիսարեւմտեան առեւտրական մեծ պո-
ղոտային վրայ՝ անոր առեւական բարգաւաճանքը
մ'երաշխայնորեց: Միայն Բ գարուն կը տեսնենք
որ երեւան կ'ըլլէ՝ կամ մասնաւոր կը վերերեւայ
բնիկ տնուն մը՝ Անդրապա՝, որ այնուհետեւ
ամբողջ բրիտանական շրջանին միակ գործա-
նակաւոր կը մնայ: Պետութեան վերակազմու-
թեան տանն՝ Անարապա Ամասոսի հետ մէկտեղ
առնուեցաւ նորակազմը՝ Հելլենիզմոսն ու հասնե-
րին մէջէն: Բ գարուն Հայկական բանակաւոր-
մին ամրապայրերէն մին երեւ. եւ մնաց իրեն
եպիսկոպոսանիւտ աթոռ մը՝ որ օգնական էր Ա-
մասիոյ մարտապղծութիւն. մինչեւ որ ԺԱ գարուն

Կարոսի եւ Կարմնոսի ընկալուած ձկ ձանի մէջ (282 Յ. Գ.
տը. 67):

1 Յետ փեր՝ § 5, էջ 150 — Նեոկադադիոպոլսոյ
գրաւորման տպուրը յաճախ պատերազմական իրեր առ-
նուած են, պողեւ՝ Պալատ (Թ. 2, 3, 9), Նիէ կամ Յաղ-
թութիւն (Թ. 8), արեւն՝ երկու ազգական նշանակե-
րու մէջ:

2 Հմմտ. Անդրեոս, փեր՝ Ա, § 41 — Այս իր-
գութիւնը կ'ապացուցի մէ Գալիս Պաղատայ (Ե. 4, 4)
ընտրելն, այլ նաեւ Փաղերմեթիոսի մշտնապարսերէն, որոնք
մէ թէ Կապպադոքիոյ՝ այլ Պաղատայի նախնական տե-
նունները կը կրեն. այսպէս՝ Արքեպիսկոպի Սեւերոսի օրով՝
Արքեպիսկո Պիտոս (CIL, III, 14184, 27, 30 — Արմ. Թ. 432-3)
եւ Գեփոսի օրով՝ Պաղատայի Նեոկադադիոս Գալատիայի
նահանգին Պաղատայի (praeses provinciae Galatiae,
CIL, III, 14184, 25 — Արմ. 425):

3 Հմմտ. Անտոնիոս Գալատիոս՝ Անիւրիոյէ Արքեպիսկո
անոնց ճամբուն վրայ (Ռոմելի, Պա՝. Աշխ., էջ 254): Եւ-
րոստիանոս Ռ-դէգրը (Itiner. Hierosol. 576, 2) կը
գրէ Andrapa՝ անտարակոյս մէջ ուղղութեամբ:

4 Այս տնուն հնագոյն յիշատակութիւնը կը գտնուի
Պաղատայ քով (Ե. 4, 4)՝ Ἀνδραπα ἢ καὶ Νεοκλαυδιό-
πολις (Անտարպա՝ որ եւ Նեոկադադիոպոլսոս):

5 Հերակլէս, 701, 7. Հմմտ. Յուստինիանոս՝ Օրենք
ԻԷ, Թ. Խ.:

6 Կոստ. Երերմանին, «Պատմ. բանակութեանց» (Ա.
էջ 21, 5, հրա. Բան. քաղաքի): 8 Յս. յալբորդ:

7 Հմմտ. Notitiae. Անտարպայի եպիսկոպոսը
Նիկիոյ Ժողովին մէջ չ'երեւան: Երանիթ ամենայն եպիս-
կոպոսն է Պաղատայի՝ որ Եփեսոսի Ժողովին կը օտարակրէ
(տես փեր Բ, § 5): Lequien (Oriens christianus, I, p. 540)
Անտարպայի ուրիշ հնագի եպիսկոպոսներուն ալ ցանկը կը
դնէ. որոնց վերջինը ԺԱ գարուն փերլէն է — Ռոմելի
Պա՝. Աշխ., էջ 321 կը նշանակէ թէ հոս նման է Ս. Հե-
սիսիոս. տես Acta SS. 6 մարտ, էջ 456՝ էջ 457-ի տէջ

վերջն ինկաւ Անիւրիոյէն Թուրքաց ձեռքը: Այս
որոյս ալ յաճական փորը հասարակութիւն մը
ստեղծեց զայսութիւն ունի Վէդիր-Քեօփրիէ մէջ:

(Հարան-իւնի.)

4, Թ. 8.



Ո՞Ր ԿԸ ԳՏՆՈՒՐԻ ԼՈՒՈՒՅՑ ԲԵՐԻՂ

Մեր բնատոհմիկ աշխարհն եւ իր ոսկե-
ղներէ լեզուն, ցալսօր բանասիրապէս, աւելի
բախտաւոր եղած են քան նախնեաց ռավորէնն
ու այն երկիրն՝ ուր խօսուած ու գրուած է սա:
Ոսկեգարուն հայերէնն ալ այնքան ուսումնա-
սիրուած ու քննուած է որ հազիւ մասնագիտա-
կան նորութիւններ կ'ընծայէ մեզ երբեմն:
Սակայն, անդին, նախնեաց ռավորէնը կամ
ստորին հայերէնը — եթէ անձա՛ չէ կոչել
զայն այսպէս — մնացած է ու կը մնայ անմշակ
դաշա մը՝ յորում քիչեր միայն աշխատած են
ցարդ, եւ որ ի վիճակի է հարուստ տոհմական
ստուռ, եթէ սակայն ձեռնհասօրէն մշակուի:
Նմանապէս, մինչ Հայաստան, քննական պատ-
մութեամբ, հնագրութեամբ, աշխարհագրու-
թեամբ եւ այլ տեսակէտով, ըստ բաւականի
ուսումնասիրուած ու քննասիրուած է թէ
մերայնոց եւ թէ օտարներու կողմէ, Հայակիր-
կիւ՝ իր պատմութեամբ, աշխարհագրութեամբ,
հնագրութեամբ եւ այլ յարակից պարագանե-
րով՝ եթէ ոչ մութի մէջ, այլ կը մնայ ցարդ
անստուգութեան մէջ ծուարուած.

Հայակիրիկիոյ պատմական աշխարհագրու-
թեան մասին ամենէն հաւատարիմ ու խոշորագիտ
հեղինակը կը ներկայանայ մեզ Հ. Ղ. Ալիշան
իւր պատմական Միստոս ուլ: Սակայն, իր այդ
հակապական աշխատութեան մէջ, Հ. Ալիշան
յաճախակի ընդհանդերու (Lücke) տեղի տալ
ստիպուած է ստոյգ տեղեկութեանց անբաւա-
կանութեան պատճառաւ, եւ շատ անգամ ալ՝
մանաւանդ տեղագրութեան մէջ՝ անճշգրտ-
ութեանց տեղի տուած է, ըստ որում Հ. Ալիշան
միշտ հետոս գտնուած է իր քննասիրած ու

'Ανδραπηγών γῆς ἱερός (բաւեալ յերկրէն Անտարպոսոյ),
Հմմտ. Synax Sirmoud. ed. Delehaye, p. 873, 2՝
էւ τῆς Ἀδραπηγῶν (այդեւ) πόλεως χῆρος τῶν Ἀρ-
μενιανῶν (Անտարպեանց քաղաքէ աշխարհէն 'Հայոց',
կամ 'Հայկականաց' ըստ բանակին ժամանակին բաժանման):
1 Ծանցական լրջանի մէջ ունեցած իւր կարեւորու-
թեան մասին՝ տես Ռիտտեր, Աշխ. ԺԸ (Փաղերմ-Եւսե, Ա),
էջ 434:

նկարագրած վայրերէն եւ օգտուած է առ հասարակ ազգակից թէ օտարազգի ուղեգիրներու եւ երկրախոյններու գործերէն¹:

Ներկայ յօդուածով՝ կ'ուզեմ մասնանշել Սիւսիոյ մէջ սարդած այդ անշտութիւններէն կամ ինչ անստոյգ երեւցած կէտերէն մին, այն է սեղն ու գիրքը Լուսւոյ բէրք ին² (Λουλου, արբ. Լուսւոյ եւ Լուսւ, Lulum, որ ընդերկար կուռախնձոր եղաւ Յունաց բիւզանդացոց եւ Արաբաց միջեւ, վիճակելով ապա մերազնեայց՝ Լեւոն Ա. թագաւորին օրով:

«Ա. բովանդակին զամենայն առ ի նախնեաց մերոց ծանօթացեալ մեզ վայրս՝ ի նահանգին Լամբրունի եւ ի կողմանքս Քասաւց կիլիկիոյ, կը գրէ Ալիշան³, հարկ է ինդրել յարեւմտակողմէ Լամբրունի, ոչ գիտեմ որքան վերանշարժ ընդ հիւսիս, այլ ոչ շատ հեռի, զի եւ մերձ ի Յարսոն ասի ի բիւզանդացի պատմաց⁴, հուպ ի սահման անըպեսաց լեռանց կիլիկիոյ եւ Իսաւրիոյ, ի բարձրաւանդակ վայրի, եւ ի գլուխ Դրանն կիլիկոսի (ըստ Լամբրունեցւոյն), զմիւս եւս ամբագոյն ի բերդորէնց նահանգին, զդոշեցեանք Լուսւոյ, եւ լին⁵»:

Ինչպէս վերագրեալ աղբրէն կը հասկցուի, Է. Ալիշան Լամբրունի, արեւմտեան հիւսիսային կողմերու լեռնաստանին մէջ կը փնտռէ այդ հին բերդը, թէեւ իր ճշդել ուզած գիրքն այնքան որոշ չէ, վասն զի առաջ «վերանշարժ ընդ հիւսիս», կ'ըսէ, յիշող՝ «մերձ ի Յարսոն», կ'աւելցնէ, եւ աւելի վարը՝ «ի գլուխ Դրանն կիլիկոսի» (ըստ Լամբրունեցւոյն)⁶, Եթէ պէտք է ստուգապէս հիմնուիլ Լամբրունեցւոյ այդ ցուցման վրայ, ուրիշն պարտ է նախ փնտռել ու ճշդել «Դուռն կիլիկոսի» գրեթէ, որով լեռնանցք մը, լեռնակիրճ մը կը մասնանշուի Յարսոսի բարձրալեռանց մէջ, կիլիկիայէն դէպ ի միջին Փոքր Ասիա եւ փոխադարձաբար, Յարսոսի բարձրալեռանց գօտին երեք անցք կ'ըն-

ծայէ. ասոնցմէ ամենէն հինն ու ծանօթն է կապուսի-Կիլիկիոյ, Pylae Ciliciae (Դրունք կիլիկիոյ), զարդին կէ-կիլիկիոյ, ուրկէ անցեր դարձեր են ի հունեմ Արեւելքի եւ Արեւմուտքի հաշակասունն աշխարհակալք եւ զօրավարք, երկրորդ լեռնանցքն է Ալուսիոյ գլխի, կիլիկոսի աջ եզրերէ գլխաւոր գետակին ակունքներուն հիւսիսակողմը, ուրկէ կ'անցնի լեռնային ամենակարճ ուղին ընդ մէջ Յարսոնի եւ Առակլիի (Էրէյլի), եւ որ պատմութեան մէջ նշանաւոր եղած է կրտսերն կիլիկոսի զօրավարներէն Մենոնի անցքով՝ ընդ առաջնորդութեամբ Եպիքսոս թագուհւոյն՝ ամուսին Սիւսենեսիոսի¹, երրորդ անցատեղին, Տիւրքիէի դէմ, կը բացուի Ալադա Չայի ակունքներուն մօտ, Տիւրքիէի ճաղի (թմբակալեռ) եւ կիլիկիէ ճաղի միջեւ, եւ կը կազմէ ամենակարճ լեռնուղին ընդ մէջ Մերսինի եւ Գարսամանի, Տիւրքիէի ճաղի հարաւային արեւմտեան ծայրին այդ լեռնապարը, կիլիկիէ, իր նմանաձայնութեամբ, կը յիշեցնէ կիլիկիոյ: Այս անցքին լեռնաստանն ուշագրաւ է իր աւերակառնողներով, ուր հին շինուածոց մնացորդներ, սիւներ, խոյանքներ, կամարակալ դռներ, նոյն իսկ եկեղեցւոյ եւ պահականոցի կիսափուլ շէնքեր ցոյց կուտան որ ի հունեմ անպաշտպան թողուած չէր այդ լեռնանցքը, թէեւ ցայսօր ոչ մի արձանագրութիւն գտնուած է Մուսիեան այդ Նիքարներուն ծագման եւ այլ պարագաներու վրայ լոյս սփռող: Սակայն, հին շինուածոց այդ յաճախութեան հակառակ, դեռ ոչ մի բերդի կամ ամրոցի աւերակ գտնուած է կիլիկոսի դրան մերձավայրերուն մէջ, ոչ յայկոցս եւ ոչ յայնկոցս:

Լեռնք արդ Ներսէս Լամբրունեցւոյ Լուլուայ բերդի մասին մէկ ուրիշ վկայութիւնը, զոր ի մէջ կը բերէ նաեւ Է. Ալիշան, «Ի բազմաժամանակեայ յամայութենէն մարդաբանակ արար մի յեղաբար իմաց, Շահնաշ, եւ զկործանեալ շինուածն Յունաց յիմայեցեալով շինեալ ամրագոյն. եւ ընդարձակեաց նովա զշալախասանեայ» թագաւորի Լեւոնի ձեռն ... եւ նովա կարողացաւ երկրորդ կապագողկիւն, յորում մայրաքաղաք Տիւսան, եւ լին², Լամբրունեցւոյ այս վկայութիւնը բաւական բացորոշ է կարենալ ընդունելու համար որ Լուլուայ բերդը ոչ թէ Լամբրունի արեւմտեան հիւսիսային, այլ կը գտնուէր ուրիշ այնպիսի վայրի մը մէջ՝ ուրկէ

¹ Ջորճանալի է որ Է. Ալիշան քիչ մը շատ փարած է Ա. Լամպուսի Voyage en Cilicie-ին, որ ուղեւոր փաստութիւն չի ներշնչեր ինձ: Իր այդ զօրին մէջ, Լամպուս կը ներկայանայ մօր աւելի երեւակայանք ջան իրական գրող մը, որ յաճախ ինքնագիւտ իր թերթով կը լինեցնէ իր գործը. երբեմն իսկ կը նկարագրէ այնպիսի վայրեր զորս անոնք ու պարտած չէ:

² Միմատ սպարապետ, իր բերդատնայնք եւ բերդորէնք ցանկին մէջ անընդմէջ նախ քան զՊապեան (զարդին Չալաքը Կիլիկի) եւ յետ Լամբրունի կը գտնուորէ Լուլուայ բերդը:

³ Սիւսան, էջ 114:

⁴ Լուլու, ձ. Գ. 91 եւ ձ. Բ. 197:

⁵ Է. Ալիշան չի ճշդեր սակայն «Դուռն կիլիկոսի» գրեթէ, զեթ գիւրացեալու համար իր փնտռուածը:

¹ Dr. Fr. Schafer, Cilicia, 87. եւ հոյսին Die kilikischen Hochpässe und Menons Zug über den Taurus.

պէսք էր որ տիրէր դէպ ի երկրորդ կապպա-
գովկիա տանող ռազմական ճամբու մը վրայ,
Լեւոն Բ., իր թագընկալութենէն (1199) առաջ
խել, աշխարհակալի հզօր բազուկին երկարեց
Տիւսիսի գոռ գրացելոյ՝ Հռոմոց Սեղճուգնեռու
սուլքանին երկրին վրայ՝ լեւոնային նիւրկիոյ
թիկունքի մարզերուն մէջ, ուր է երկրորդ
Վապպագովկիա, կամ լաւ եւս՝ Տիւնիս Բուսուր
(Tyantitis), յորում մայրաքաղաք Տիւնա (այժմ
Ֆէլէ-է Էլ-Բու կամ Ֆէ-Էլ-Բու, Նիկեայի գաւառին
մէջ)։ Ուրեմն կը մնայ գիտնալ թէ Լեւոն Բ. որ
ճամբով գնաց գրաւելու Տիւնա քաղաքը։ Մեր
կիլիկեցի ժամանակագիրները, որչափ գիտեմ,
լուս կը մնան Տիւնայի գրաւման մասին. բայց
կը յիշեն Առակլիի (այժմ Էլեկի, որ է Տիւն
Նի-Բուսուր-է-Էլ-Բու, Cybistra-Heraclea) գրա-
ւումն ու Նեսարիոյ պաշարումը Լեւոն Բ. ի ձեռ-
քով՝ Տիւնայի եւ Առակլիի ժողովուրդները
(10 ժամ) ապահով գրաւական մըն է աներկ-
բայապէս ընդունելու համար որ անոնք միա-
ժամանակ՝ մէկ արշաւանքով գրաւուած են։
Տարսոնէն մեկնելով, Լեւոն երեք տարբեր ճամ-
բով կրնար յարձակիլ Հռոմոց Սեղճուգնեռու
երկրին վրայ. առաջինը՝ Տիւնայէն պէլի ճամ-
բով (որ է Թերեւս “Գուռն Նիւրկիոյ”), որ
Խաւարին Թաւուրին սահմանները կը հանէ,
բայց ոչ թէ երկրորդ կապպագովկիոյ։ Երկրորդ
ճամբան Նիւդոնսի (Գարսուս 2այ) ստորին ըն-
թացքով եւ Լամբրունի վրայէն կը անոն մինչեւ
Ալսոսթի (Տաւրոսի ամենաբարձր լեռնագա-
գաթը, 3560 մ)։ Լեւոնացիին բարձրամարդերը,
ուրկէ դէպի արեւմուտք Մուսուրս
Բիւրդի (Մուսուրս Գիւրդի, որ է այժմեան Միւսուրս
Բիւրդի) ճամբով եւ Գոմա 2այի հովիտէն կը
հանեն Առակլի։ Եթէ ոչ ստորջ, գէթ անհասա-
նելի ալ չէ որ Լեւոն Բ. լեւոնային այս կարճ
ճամբով արշաւած ըլլայ Առակլիի կողմերն եւ
անտի դէպի Տիւնա յառաջացած։ Արդէն, Նի-
ւրկիոյ հայկական տիրապետութենէն շատ
առաջ, այս լեւոնացիին ռազմական տեսակետով
ընթացած առաւելութիւնը ֆենոիկոնէ գիտնեք։
Լեւոն Բ. ի յաջորդը՝ Էթիւմ Բ. այս միջնոյն
լեւոնային ճամբով կատարեց իր երկու ար-
շաւանքները յայնկոյն Տաւրոսի բարձրալեւանք,
մինչ “ի գաւառն Հռոմոց, առ ստորտով լեւինն
Տաւրոսի, մերձ ի քաղաքն Առակլի, ի քիւն
Նիւրկիոց”¹ եւ ի Մուսուրս Գիւրդի (յաթի 1255),

եւ միւսը՝ ըստ Սմառտայ պատմիչի, “ի Թուին
708 (= 1259) Էթիւմ թագաւորն էառ
զերբից Մուսուրս”։

Սակայն, եթէ մանր քննենք, վերի վար-
կածն ալ անհամահայեցանք կը թուի գէթ երկու
պատճառաւ։ Նախ որ, ժամանակակից քաղա-
քական պայմաններուն բերմամբ, Տաւրոսի բար-
ձրալեւանք այդ նեղ ու անձուկ ձորերն ու կիր-
ճերն, ինչպէս եւ անձամբ պարտած ու տեսած
եմ, Լեւոնի պէս վարպետ ռազմավարի որ հա-
շիւներուն շատ պիտի չյարմարէին իրմէ ոչ
նուազ զօրաւոր թշնամի մը վճռական ճակա-
տամարտի հրաւիրելու հոն եւ ճամբայ հոր-
դելու համար դէպ ի Առակլի եւ ի Տիւնա։
Եթէ նոյն իսկ ենթադրենք որ Լեւոն Բ.
Լամբրունի ճամբով Ալսոսթի պէլին անցաւ,
պարտ էր ուրեմն, առանց աջ ու հեծակ նա-
սելու, ուղղակի խաղալ գնալ դէպ ի հիւսիս
արեւմուտք եւ գրաւել ամէն գնով Մուսուրս
լեւոնաբերդը, որ յայնկոյն Տաւրոսի բարձրա-
լեւանք կը տիրէ Գարսուրմար Տաղի լեռնա-
ձորերուն մինչեւ Առակլի, ինչ որ կը նշանակէ
մինչեւ Տիւնա։ Այս լեւոնաբերդին գրաւումը,
որ իսկապէս մեծ նշանակութիւն ունեցած պիտի
ըլլար յայնկոյն բաւալեւանք բլրաստանին եւ
դաշտապայտերու տիրապետութեան համար,
անյիշատակ չէր մնար անուշա կիլիկեցի ժա-
մանակագիրներու քով, ըստ որում Լեւոն Բ. ի
յաջորդին՝ Էթիւմ Բ. ի կողմէ նոյն լեւոնա-
բերդին գրաւումը հրաշապատում տողերով
նկարագրուած է²։

Ուրեմն կը մնայ մեզ ձեռք առնել այն
հիշատուրց գրեւաւոր պողոտան, որ Տարսոնէն
դէպ ի հիւսիս Նիւրկիայ կապանէն անցնելով եւ
Պուսուրս Գիւրդին (այժմեան Պուսուրս Գիւրդի, խաչա-
կաց Podandus, Opodanda, Botentron,
եւ ինչ) մինչեւ Մարտի ձախ եզերքին գետակից-
ներէն 2560 քաղաքի հետեւելով եւ ապա դէպ ի
արեւմտակողմ շեղելով մինչեւ այժմեան Փոր-
սուգ եւ Պայալը գիւղերը, դէպ ի հիւսիս կը
տանի Երկրորդ Վապպագովկիա, յորում մայրա-
քաղաք Տիւնա։ Այս ան հին պողոտան է, որ

շատ հետեւեալը՝ Գարսամիւրի մտակոյ Գարս Տաղի Խոր-
բուն մէջ։ Այս մասին ալ ուրիշ աւելի։

¹ Սմառտ, 177-81 — Լեւոն Բ. ի բովանդակ իշ-
խանութեան ժամանակ Մուսուրս լեւոնաբերդի մասին ոչ
մի յիշատակութիւն չըլլած զատ, ոչ Սմառտ Սպարապետի
եւ ոչ ալ Է. Սիլվանի բազմաթիւ յիշատակած պատմիչին՝ բեր-
դատեալ եւ բերդերէնց ցանկերուն մէջ յիշուած է։ Այսին
կը հետեւի որ Լեւոն Բ., գէթ իր թագընկալութենէն
առաջ, Տաւրոսի հիւսիսային ստորոտներու լեռնաստանին
չէր տիրած տակաւին։

¹ Ըստ Իս. Է. Ալիւան այս լեւոնագրին տեղւոյն ու
դիրքին հշտման մէջ ալ կը տեսնուի ի զուգ փոխաւելով զայն

անյիշատակ ժամանակներէ ի վեր մինչեւ նոր դարուց եփեպտոսի իուսական Մէհմէտ Ալիի որդւոյն՝ հռչակաւորն Խալաֆիմ փաշայի առնն ծառայած է իբր ռազմական եւ անուարական անձնադասնուկ ծամբայ ընդ մէջ Ասորիքի եւ Փոքր Ասիոյ՝ Իսկ այն բերդը, որ վճռապէս կարեւորութիւն ունէր Երկրորդ կապպագովիոյ գրաւման համար, եւ որով՝ ըստ Ն. Լամբրունեցոյ՝ «կարողացաւ Երկրորդ կապպագովիոյ յորում մայրաքաղաք Տիանա», Լուլուայ ամրոցն, ըսել կ'ուզեմ, այս պողոտային վրայ պէտք էր որ գտնուէր: Ըստ ամենայն հաւանականութեան, Լուլու Բ. Կուկիկայ կապանին այս ծամբով էր որ խաղաց գնաց նախ ի Լուլու՝ որուն կը բերդաւորէր Ն. Լամբրունեցոյ եղբայրներէն մին՝ Շահնշահ, եւ անոր արշաւեց Իկոնիոնի Սելճուգներու սուլթանին երկիրը, թերեւս մինչեւ Տիանա, ուրիշ գէպի հարաւարեւմուտք դաշտավայրերէն անցնելով գրաւեց նաեւ Աւաղիկ:

Թէ որքան իրաւացի ենք մեր այս վարկածին մէջ, թէ՛ խոսի նոյն ինքն Ալիշան. «Եւս իբր վաթսուեւ ամաց բարձման թագաւորութեան մերոյ»՝ յիշատակի բերգոս այս (այսինքն Լուլուայ բերդ) առ ճանապարհաբեր միոյ փոռնիկի (ղերգրանոն, Bertrandon de la Broquière), որ քաղով ի կողմադեմ անցեալ ընդ կապան եւ ընդ լեւնաֆոլիսա՝ յարեւմուտս կայս, դիմելով ի Լարանա, եկն եւ ետեւ զբերգոս զայս զոր կոչէ Ալ-Է, Լծօ, ուր եւ Գարաման իշխանն կարգեալ էր բաժնուին, եւ յանձնեալ ի Յոյն մի, որում առեալ երկուս (զուգարգ) գահեկանն՝ եւս բանալ զպահան եւ էանց¹, ուրեմն բացայայտ է որ փոռնիկ ուղեգիրը, ինչպէս կը հաւաստէ նոյն ինքն Սիւսանի հեղինակը, Կուկիկայ կապանէն անցնելով եւ գէպ ի արեւմուտք դիմելով՝ «ընդ լեւնաֆոլիսա» (ըսել միւզէ շաքարի վերին ընթացքին լեւնաֆոլիսաբն զողանդիէն սկսեալ, ուրիշ կ'անցնի այսօր Պաղատաի նորաշէն երկաթուղին), եկաւ հասաւ հոն՝ ուր հին պողոտան կը շնորհ գէպ ի հիսիս, եւ ուր կը գտնուի մեր խնդրական բերդը, Լուլու, եւ ասորի մի եւ նոյն ուղղութեամբ շարունակելով իր ծամբան գէպ ի արեւմուտք, Առաւելիէն անցաւ գնաց ի Լարանա (Գարաման): Եւ արդարեւ, վերագրեալ Փորսուգ եւ Պալալը գիւղերուն մերձակայից լեւնաֆոլիսաբն մէջ, բարձունքի մը վրայ կը տեսնուին

հին բերդի մը մնացորդները, զորս դժբախտաբար անհնար եղաւ ինձ մօտէն տեսնել ու քննել, եւ զորս կը համարիմ խնդրոյ առարկայ Լուլուայ ամրոցին մնացորդները:

ՄԵԼԻՔ-ԹԵՎԷԷԼԻ



Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ՀՌՈՎՄԵԸՎՈՆ ՀՈՅՈՍՏՈՆ ԵՒ ՀՌՈՎՄԵԸՎՈՆ ՍՏՏՐԵՊՈՒԹԻՆՆԵՐԸ

Դ-Ձ ԳԱՐԵՐՈՒՆ

(Շարունակութիւն)

Բ.

Հռովմէական Մեծ Հայաստանի բաժանման երբ:

Թագաւորութեան վարժանք: Հայկական զուստները: Մեծ Հայաստան չորովմական զուստ չէ: Հայաստանի Կոմսը: Ճիւղողական յարաբերութիւններ:

Հայաստանի հռովմէական պաշտպանութեան ներքեւ մօտ մօտ — Մեծ Հայաստան (Armenia magna)¹ — կը բաղկանար Ասիատարուսի եւ Արածանի գետին հիւսիսային կողմը գտնուող հետեւեալ բարձրագաւառներէն եւ կնդեաց, Գերջան, Խորձեան, Կարին եւն. Սեւ Դովին բաժնուած էր Պոլսեանեան Պոնտոս գաւառով, Փոքր Հայքէն՝ Եփրատով. Երասխայ ջրաբաշխը գէպ ի Պարսկահայաստան սահմանէն էր, որ սակայն բաց էր եւ անպաշտպան: Հարաւեւն քանի մը գաւառներ կարուած եւ արդէն գոյութիւն ունեցող հռովմէական սատարապոլթեանց կցուած էին: Մեծ Հայաստանի մէջ մեծ քաղաքներ չկային, հին թագաւորանիստ Արաշտա եւ Վաղարշապատ³ քաղաքները կը վերաբերէին Պարսկահայոց:

Մեծ Հայաստանի անդրադէպ վիճակին վրայ տեղեկութիւն քաղելու համար գրեթէ միայն հայ արդիւններու ստիպուած ենք ապաւինել: Նո-

¹ Նաեւ Կերթ (interior) կոչուած: L. 5 Cod. J. de off. mag. mil. 1. 29 — magnam Armeniam quae interior dicebatur (Մեծ Հայաստան, որ Կերթի կը կոչուէր): Nov. 31. c. 1. — Յայաստանը զանազանեղաւ համար Փոքր Հայքէն, որ աւելի յառաջ հռովմէական եղած էր: ² Ման. H. Kiepert's Asia exterior քարտէջը: Սահմանի յարաբերութեան նկատմամբ Պրոկ. վան շին. Գ. 3 (251. 252): ³ Հոս էր հայ Եկեղեցի, ուր զինքն կաթողիկոսութեամբ: